17.05.2023
351-02

ՀՀ Բարձրագույն դատական խորհրդի
նախագահ Կարեն Անդրեասյանին

Տեղեկություն ստանալու հարցում

Հարգելի՛ պարոն Անդրեասյան,

Համաձայն ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում ենք տրամադրել հետևյալ տեղեկությունները.

ՀՀ դատական օրենսգրքի 11-րդ հոդվածի 9-րդ կետը սահմանում է. «Դատական իշխանության պաշտոնական կայքում հրապարակվում են գործի և դրա ընթացքի վերաբերյալ տեղեկությունները, որոնց ցանկը և հրապարակման կարգը սահմանում է Բարձրագույն դատական խորհուրդը»:

1. Արդյո՞ք Բարձրագույն դատական խորհուրդը մշակել և ընդունել է վերոնշյալ կարգը:
2. Եթե ոչ, ապա խնդրում ենք տեղեկացնել, թե երբ է նախատեսվում մշակել և ընդունել վերոնշյալ կարգը:
3. Եթե այո, ապա խնդրում ենք տրամադրել կարգը կամ ակտիվ հղում, որով կարող ենք ծանոթանալ կարգի բովանդակությանը:

Խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում:

Հարգանքով՝
ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան

Ինֆորմացիայի ազատության կենտրոն (ԻԱԿ)
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի փող. 1/3, 4-րդ հարկ, Հեռ +37491407836, Էլ. հասցե՝ foi@foi.am Կայք՝ www.foi.am